9.5.2. Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն

Բնական աղետներ

494. "ՀՀ կառավարության 2007 թ հունվարի 11-ի նիստի "ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգին հավանություն տալու մասին" N 1 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել "ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգի խնդիրներից բխող՝ ՀՀ տարածքում առավել ռիսկային 131 սողանքային տեղամասերում միջոցառումների իրականացման ժամանակացույցը, որում ընդգրկվել են մարզում առկա 10 սողանքային՝ Այգուտ, Դպրաբակ, Ձորավանք, Մարտունի, Կալավան, Թթուջուր, Գետիկ, Երանոս, Ավազան և Ջաղացաձոր տեղամասերը: Նշված տեղամասերում իրականացվելիք միջոցառումները մշտապես պետք է ներկայացվեն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում: ՀՀ Գեղարքունիքի մարզում առավել ռիսկային սողանքային տեղամասերում միջոցառումների իրականացման համար ըստ ժամանակացույցի կպահանջվի 500.0 մլն. ՀՀ դրամ:

495. Մարզում շահագործվող բազմաբնակարան բնակելի շենքերի, կառույցների և շինությունների /որոնք կառուցվել են մինչև 1988թ./ սեյսմակայունության ուժեղացում: Շենքերի սեյսմիկ կայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է ներդնել 3.5 մլն. դրամ:

Սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատումը

496. Գոյություն ունեցող շենքերի, շինությունների սեյսմիկ վտանգի գնահատում համաձայն սեյսմիկ ռիսկի քարտեզների, որոնց համար անհրաժեշտ է 10.0 մլն. դրամ: